ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2021Թ. ԱՊՐԻԼԻ 11-ԻՑ 13-Ը ՄՈՒՐՄԱՆՍԿԻ ՄԱՐԶ ԵՎ ԱՊՐԻԼԻ 13-ԻՑ 16-Ը ՄՈՍԿՎԱ (ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**

   Հակոբ Վարդանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

   Ռուսաստանի Դաշնություն (Մուրմանսկի մարզ) - 2021թ. ապրիլի 11-ից 13-ը,
   Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա), 2021թ. ապրիլի 13-ից 16-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   «Ռուսատոմ Սերվիս» ԲԸ

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).**

   Ծանոթանալու Կոլայի ԱԷԿ-ի շահագործման ժամկետի կրկնակի երկարացման փորձին, ինչպես նաև «Ռոսատոմ» պետական կորպորացիայի և «Գիդրոպրես» կոնստրուկտորական բյուրոյի ղեկավար կազմի հետ քննարկելու ՀԱԷԿ-ի շահագործման ժամկետի կրկնակի երկարացման և Հայաստանում նոր ատոմային բլոկի կառուցման հնարավորությունները

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Կոլայի ԱԷԿ-ում քննարկվել են ՀԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի շահագործման ժամկետի կրկնակի երկարաձգման հարցերը և անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումների մշակման ուղիները:

   Այցի ընթացքում քննարկումներ են տեղի ունեցել նոր ատոմային բլոկի կառուցման հետ կապված հարցեր:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

   Այցի ընթացքում հանդիպում է տեղի ունեցել Կոլայի ԱԷԿ-ի տնօրեն Վ.Վ. Օմելչուկի հետ փորձի փոխանակման նպատակով:

   Մոսկվայում հանդիպումներ են տեղի ունեցել «Ռոսատոմ» ատոմային էներգիայի պետական կորպորացիայի գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Կ.Բ. Կամարովի հետ, «Գիդրոպրես» կոնստրուկտորական բյուրո ԲԸ-ի գլխավոր տնօրեն Վ.Վ. Ջանգոբեգովի և Գլխավոր նախագծող, ռեակտորների կայանների հիմնական համակարգերի և սարքավորումների նախագծման վարչության պետ Մ.Պ. Նիկիտենկոյի հետ:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

   Այցի արդյունքերով փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

   Պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ հայկական կողմը տեխնիկական առաջադրանք կմշակի ՀԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի և նոր ԱԷԿ-ի կառուցման համար և կներկայացնի ռուսական կողմին:

10. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ**

19 ապրիլի 2021թ.